

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՐԱՆՏ ՍՏԵՓԱՆԻ

**«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԸ
(ՀՀ ՆՅՈՒ ԹԵՐՈՎ)»**

Ը.00.02 - «Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտություն ամբ տնտեսագիտություն թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման արեւախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2018

Ատենախոսությունը թյան թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	Տնտեսագիտություն	դոկտոր,
	պրոֆեսոր	
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Միքայել Սերգեյի Մելքունյան	
	Տնտեսագիտություն	դոկտոր,
	պրոֆեսոր	
	ԱշոտԲորիսի Սալազարյան	
	Տնտեսագիտություն	թեկնածու
	ԱրաՌուդիկի Նունյան	
Առաջատար կազմակերպչուհի	Հայ-Ռուսական Համալսարան	

Ատենախոսությունը պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունիսի 28-ին ժամը 14⁰⁰-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտություն թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, 0025, Նալբանդյան 128

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սենդագիրն առաքված է 2018թ. մայիսի 26-ին:

014 մասնագիտական խորհրդի
 գիտական քարտուղար,
 տնտեսագիտություն դոկտոր, պրոֆեսոր
 Գևորգյան

Ս. Ա.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակը բնակչության բարեկեցության բարձրացումն ու կենսամակարդակի շարունակական աճի համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: Դրված նպատակի իրագործման համար Էական դեր ունի Էլեկտրաէներգետիկական համակարգը, որը կոչված է բավարարելու բնակչության պահանջները առաջին հերթին Էլեկտրաէներգիայով և նպաստելու արտադրության միջոցների արտադրության ընդլայնված վերարտադրությանը:

Շուկայական ժամանակակից տնտեսության պայմաններում, Էլեկտրաէներգետիկական համակարգի շրջանակներում են լուծվում երկրի ողջ արտադրական ներուժի նյութական բազայի կառուցվածքային բարեփոխման ու սոցիալական ոլորտի զարգացման հրատապ խնդիրները: Էներգետիկ ոլորտի արդյունավետ գործունեությունից է կախված հայրենական տնտեսության զարգացումն ու մրցունակությունը համաշխարհային տնտեսությունում: Այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում Էներգետիկ ոլորտի Էական բարեփոխումների հետ միաժամանակ ձևավորել ու արդիականացնել Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների կառավարման համակարգը, բարձրացնել դրա գործելու արդյունավետությունը:

Խնդիրը հրատապ է հատկապես ՀՀ տնտեսության համար, քանի որ երկրում գործող ավելի քան 190 Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունները դեռևս չեն հարմարվել շուկայի կողմից թելադրվող պահանջներին, գտնվում են ֆինանսա-տնտեսական ոչ բարվոք վիճակում և մրցունակ չեն արտասահմանյան Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների նկատմամբ: Դա բացատրվում է տնտեսական, սոցիալական հարաբերությունների շարունակական բարդացմամբ, արտաքին ու ներքին միջավայրի փոփոխականությամբ, նյութական բազայի տեխնոլոգիական մակարդակի բարձրացման, Էլեկտրաէներգետիկական համակարգի աշխատանքների ու ծառայությունների շուկայում մրցակցության ծավալմամբ: Որքան կոշտ են շուկայի պահանջները, ընդլայնված է սպառողների պահանջների շրջանակը, այնքան առավել սուր է կազմակերպության կառավարման համակարգի կատարելագործման՝ կառավարման առավել արդյունավետ համակարգի ընտրության անհրաժեշտությունը, որն ունակ կլինի այնպիսի որոշումներ ընդունելու, որոնք կապահովեն

Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպության գործունեության բարձրարդյունքներ:

Ուսումնասիրվող թեմայի առանձին խնդիրներով զբաղվել են արտասահմանյան և հայրենական շատ գիտնականներ, սակայն նրանց աշխատանքներից շատերը հիմնականում վերաբերում են էներգետիկ ոլորտին, և քիչ տեղ է հատկացվել Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպության գործունեության ուսումնասիրությանը: Իսկ այն գիտնականները, ովքեր այս կամ այն չափով անդրադարձել են ուսումնասիրվող ոլորտին, կառավարման համակարգի կառուցվածքի մշակման և կատարելագործման մեթոդները դիտարկում են մեկուսացված, հաշվի չառնելով ժամանակակից պայմաններում գերակահանդիսացող մի շարք գործոններ, մասնավորապես, մարդկային կապիտալը և դրա բաղադրիչը հանդիսացող սոցիալական կապիտալը: Այսօր կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման համար առավել հրատապ են դառնում դրաստեղծման սկզբունքները և գիտականորեն հիմնավորված կառուցվածքի ընտրությանը:

ՀՀ-ում վերոնշյալ խնդիրների լուծմանն առնչվող հետազոտությանն են ներգրավվել համարել ամբողջական, բավարար ընդգրկունությունը ու խորությունը կատարված, հետևաբար Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպության կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղվող հետազոտությանն անցկացման անհրաժեշտության հրատապությանը չի վերացել:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության հիմնական նպատակը Էլեկտրաէներգետիկական համակարգի տեսամեթոդական և գործոնային վերլուծության հիման վրա ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացման արդի հիմնախնդիրների բացահայտումն ու առկա հիմնախնդիրների լուծման ուղիների առաջարկումը:

Նպատակի իրագործման համար մեր առջև դրվել են հետևյալ խնդիրները.

- Բացահայտել Էլեկտրաէներգետիկական համակարգի էությունը վերհանելով համակարգի առանձնահատկությունները
- Բացահայտել Էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպության կառավարման արդյունավետության վրա ազդող մակրոտնտեսական գործոնները,
- Վերլուծել ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի ներկավիճակը

- Վերլուծել Էներգետիկայի և տնտեսության մյուս ոլորտների միջև կոռելացիոն կապերը ՀՀ-ում
- Բացահայտել համակարգում առկա հիմնախնդիրները վերլուծել Էներգետիկ բնագավառում առկա հիմնախնդիրների լուծման միջազգային փորձը և բացահայտել ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները,
- Ուսումնասիրել և բացահայտել ՀՀ Էլեկտրաէներգետիկայի համակարգի կառավարման առանձնահատկությունները
- Ուսումնասիրել համակարգի պետական կարգավորման իրավաօրենսդրական համակարգը
- Ուսումնասիրել պետական կարգավորման գործընթացը
- Բացահայտել համակարգի տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիները
- Կանխատեսել Էլեկտրաէներգետիկայի համակարգի զարգացման հեռանկարները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության առարկան Էլեկտրաէներգետիկայի համակարգի կազմակերպության ներքին կառավարման համակարգերի կառուցվածքները և դրանց ձևավորման տեսամեթոդական հիմքերն են, իսկ օբյեկտը` ՀՀ Էլեկտրաէներգետիկայի համակարգի կազմակերպության ներքին:

Հետազոտության տեսակն, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության նպատակներին համապատասխան, մեր կողմից կիրառվել են գիտական ճանաչողության վերացարկման, համակարգային, դինամիկ վերլուծության ներքին, համեմատական, գործոնային վերլուծության ներքին, տնտեսամաթեմատիկական մեթոդները: Հետազոտության համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և օտարազգի գիտնականների և մասնագետների աշխատությունները, ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրատարակած տեղեկագրերը, ՀՀ Հանրային ծառայության ներքին կարգավորող հանձնաժողովի, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հրապարակումները, Էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպության պաշտոնական տվյալները, նյութերը, Էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները:

Յետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետազոտության ընթացքում ստացված մի շարք տեսական, մեթոդական և գործնական արդյունքներով, որոնք չեն կրկնում ոլորտի հետազոտողների կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Իրականացված վերլուծությունների և հետազոտությունների ընթացքում ստացված գիտական արդյունքներն են.

- Առաջարկվել են ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման մեթոդաբանական նոր մոտեցումներ կապված սակագնի մարժայի հաշվարկման հետ:
- Գնահատվել են ՀՀ էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի փոխադարձ կապերի ամրությունն աստիճանը, որը հնարավորություն է ընձեռում կանխատեսել էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը՝ կախված տնտեսության առանձին ճյուղերի սցենարային զարգացումներից:
- Գնահատվել են էլեկտրաէներգիայի արտադրության ֆունկցիոնալ կապը ՀՆԱ-ի աճից, ՀՆԱ-ի ճեղքի և էլեկտրաէներգիայի գերարտադրության կամ թերարտադրության (ճեղք) միջև կապը: Կանխատեսման՝ ապագային միտված և ինտեգրոն մոտեցումներով, ՀՆԱ-ի աճի և էլեկտրաէներգետիկայի ոլորտի միջև կապերի գնահատումը հնարավոր է դարձնում կանխատեսել անհրաժեշտ ժամանակաշրջանի էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Յետազոտության ընթացքում ստացված արդյունքներն ու եզրահանգումները կարող են կիրառվել էներգետիկ ոլորտի կառավարման և կարգավորման գործառնությունների իրականացնող պետական մարմինների, ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների կողմից: Յետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտակար լինել էլեկտրաէներգետիկային համակարգի ոլորտի և կառավարման հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար, իսկ աշխատանքում արժարժված հիմնական դրույթները կարող են կիրառություն գտնել տնտեսագիտության տեսության ուսումնական գործընթացում, ինչպես նաև հիմնախնդրին վերաբերող հատուկ դիսցիպլինաներում:

Արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքում արժարժված հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի

պէտական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր արասալիս տնտեսական անձնակազմի և ասպիրանտուրի գիտական նստաշրջաններում, «Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման» ամբիոնի կողմից կազմակերպված գիտական սեմինարներում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները հրատարակվել են գիտական 6 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության ծավալը և կառուցվածքը պայմանավորված են առաջադրված նպատակով և խնդիրներով: Այն շարադրված է համակարգչային 133 էջի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ **«Էլեկտրաէներգետիկական համակարգի տեսական մեթոդական մոտեցումները»**, գլուխը նվիրված է տեսական, մեթոդական հարցերի մեկնաբանմանը: Մասնավորապես, տրվել է **Էլեկտրաէներգետիկական համակարգի ամբողջական բնութագիրը** դիտարկվել են **Էլեկտրաէներգետիկական համակարգի տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդաբանական խնդիրները:**

Հեղինակը՝ մեկնաբանելով էներգետիկական բնագավառի էլեկտրաէներգետիկական համակարգի վերաբերյալ տնտեսագիտական գրականության ոլորտում առավել հաճախ հանդիպող սահմանումները, ընդգծում է գլոբալացման պայմաններում էլեկտրաէներգետիկական համակարգի մեծացող դերը երկրի անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման գործում:

Հեղինակը՝ հետազոտության տեսական հիմքերի ամրապնդման, էներգետիկ բնագավառի էության բացահայտման, բովանդակության դերի հստակեցման տեսանկյունից կարևորում է ինչպես արտադրական ենթակառուցվածքների տնտեսագիտական բովանդակության մեկնաբանումը, այնպես էլ էներգետիկ անվտանգության հիմնախնդիրը:

Ընդհանրացնելով տնտեսագիտական գրականության ոլորտում առկա սահմանումները հեղինակը եզրակացնում է, որ տնտեսագիտական գրականության մեջ կայունացել է այն ըմբռնումը, որ էներգետիկայի բնագավառը հասարակական ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման,

Էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի ծառայության իրականացման, Էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև Էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի և բնական գազի ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցերի կառուցման, Էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսվարող սուբյեկտների, այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայությունների մատուցող կառույցների համախուլմբն է:

Էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով հեղինակն առաջարկում է հաշվարկված անհրաժեշտ հասույթի նկատմամբ կիրառել սեզոնային ճշգրտող գործակից, որը կորոշի սակագնի մարժան սպառողական յուրաքանչյուր խմբի համար: Այսպես՝

$$\text{Սակագնի մարժա} = \frac{\text{Անհրաժեշտ հասույթ(դրամ)} \times k}{\text{Ի(կՎտժ)}} - \text{ԷԳՄՍ}$$

k-ն ճշգրտող գործակիցն է

ԷԳՄՍ-ն լիցենզավորված անձի Էլեկտրաէներգիայի գնման միջին սակագինն է

Ի-ն լիցենզավորված անձի կողմից իրացվող Էլեկտրական էներգիայի քանակությունն է (կՎտժ)

Սեզոնային ճշգրտումը կարելի է իրականացնել հաշվարկային տարին բաժանելով երկու մասի և սակագնային մարժան հաշվարկել տարեկան երկու անգամ: Քանի որ ցուրտ եղանակը տարվա ընթացքում Էլեկտրաէներգիայի սպառման ծարանրաբեռնված ժամանակահատված է համարվում, ՅԾԿՅ-ն կարող է ճշգրտող ողջամիտ գործակիցը սահմանել 1-ից բարձր: Դահիմնավորվում է նաև նրանով, որ ձմռանն օգտագործվում է ջերմաէլեկտրակայանների կողմից մատակարարված Էլեկտրաէներգիան, որը գազի գնից կախված՝ ունի թանկ ինքնարժեք: Իսկ գարնանը և ամռանը, երբ նկատվում է Էլեկտրաէներգիայի սպառման համեմատաբար թեթև ծանրաբեռնվածություն, ՅԾԿՅ-ն կարող է սահմանել 1-ից ցածր ճշգրտման ողջամիտ գործակից, ինչը կբերի Էլեկտրաէներգիայի սակագնի նվազման: Անհրաժեշտ է դիտարկել նաև այն հանգամանքը, որ ամռան և գարնան սեզոններին մատակարարված

Էլեկտրաէներգիան արտադրվում է հիմնականում ատոմակայանի և հիդրոէլեկտրակայանների կողմից, որն ունի էականորեն ցածր սակագին քան ՋԷԿ-երինը: Սեզոնային ճշգրտող գործակիցը կսահմանվի ՅԾԿՅ-ի կողմից և կախված կլինի Էլեկտրաէներգիայի պահանջարկի կանխատեսումից, Էլեկտրաէներգիա արտադրող կայաններին պատվիրված հոսանքի ծավալից ինչպես նաև տարվա եղանակային կանխատեսումից՝ ցուրտկամ տաք լինելուց: Կարելի է եզրակացնել, որ սակագնի հաստատման մեթոդով ոգիան անկատար է:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի արդի վիճակի և առկա կապերի վերլուծությանը»** գլխում ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի ներկա վիճակի վերլուծությանը բացահայտվել են համակարգում առկա հիմնախնդիրները, գնահատվել են ՀՀ-ում Էներգետիկայի և տնտեսության մյուս ոլորտների միջև կոռելացիոն կապերը, Էլեկտրաէներգիայի արտադրության ֆունկցիոնալ կապը ՀՆԱ-ի աճից:

Էներգետիկ բնագավառի ներքին խնդիրները բացահայտելու նկատառումով ուսումնասիրվել է դրանք առաջացնող և լուծման հնարավոր պայմաններ ապահովող մակրոմիջավայրը: Էներգետիկ համակարգի հետագա զարգացման տեսակետից ճիշտ որոշումների ընդունումն ժամանակ կարևորելով հատկապես Էներգետիկ շուկայի առաջարկի և պահանջարկի համապատասխանության ապահովումը, հեղինակը ուսումնասիրել է Էներգետիկայի և տնտեսության մյուս ոլորտների միջև կոռելացիոն կապերը միջև եղած փոխադարձ կապերը, գնահատել դրանց ամրության աստիճանը՝ իրականացնելով կոռելյացիոն վերլուծություն: Հաշվի առնելով այն, որ տվյալները եռամսյակային են և որոշները ունեն խիստ սեզոնային կոմպոնենտ իրականացվել է վիճակագրական շարքերի սեզոնային հարթեցում:

ԱՆՅՆՈՒՍԱԿ 1. Տնտեսության ճյուղերի միջև փոխկապվածության
Պատրաստի կորելյացիոն մատրից

Անյունակ 1-ում ներկայացված ցուցանիշները արտացոլում են
Էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի միջև բավականին
ամուր կապերը: Հատկապես ամուր են Էներգետիկայի և
գյուղատնտեսության, Էներգետիկայի և մշակող արդյունաբերության
միջև կապերը: Հատկապես ամուր են Էներգետիկայի և
գյուղատնտեսության, Էներգետիկայի և մշակող արդյունաբերության
միջև կապերը:

Թույլ, սակայն դրական կապ կա Էներգետիկայի և
հանքարդյունաբերության միջև Բավականին հետաքրքրական է կապը
շինարարության և Էներգետիկայի միջև: Տեսականորեն, այս երկու
ճյուղերի միջև պետք է ենթադրել ամուր դրական կապ, սակայն,
արդյունքները խոսում են հակառակ պատկերի մասին՝ կապը թույլ է և
բացասական: Սա բացատրվում է նրանով, որ վերջին համաշխարհային
ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո շինարարության ոլորտը ՀՀ-ում
շարունակական և զգալի անկում է ունեցել, սակայն, քանի որ,

	A	B	C	D	F	G	H	I	J	K	L	M	N	P	Q	
A	Գյուղատնտեսություն, անտ. և ձկն.	1														
B	Հանքագործական արդյ. և բացահանքերի շահագործում	0.03	1													
C	Մշակվող արդյունաբերություն	0.34	-0.15	1												
D	Էլեկտրականություն, գազի, զոլորշու և լավորակ օդի մատակարարում	0.55	0.17	0.55	1											
F	Շինարարություն	-0.09	0.26	-0.60	-0.32	1										
G	Մեծածախ և մանրածախ առևտուր	0.28	-0.02	0.67	0.63	-0.60	1									
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	0.01	0.11	0.30	0.06	-0.29	0.30	1								
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	0.54	0.05	0.75	0.88	-0.56	0.79	0.26	1							
J	Տեղեկատվություն և կապ	0.24	0.05	0.75	0.66	-0.55	0.75	0.36	0.83	1						
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	0.49	0.18	0.66	0.69	-0.46	0.78	0.59	0.82	0.78	1					
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0.53	-0.13	0.78	0.79	-0.61	0.84	0.24	0.91	0.76	0.78	1				
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	0.56	-0.11	0.75	0.64	-0.41	0.60	0.18	0.83	0.78	0.63	0.79	1			
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.55	0.02	0.78	0.85	-0.55	0.71	0.25	0.97	0.80	0.78	0.92	0.84	1		
P	Կրթություն	0.49	0.12	0.68	0.73	-0.44	0.62	0.40	0.89	0.77	0.77	0.84	0.82	0.93	1	
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	0.50	0.05	0.76	0.85	-0.62	0.79	0.31	0.95	0.81	0.80	0.92	0.78	0.94	0.85	1
$r < 0.4 \rightarrow$ $ 0.4 \leq r < 0.6 \rightarrow$ $ 0.6 \leq r < 0.8 \rightarrow$ $r \geq 0.8 \rightarrow$ 																

շինարարության ոլորտի կողմից սպառումը Էներգետիկայի համախառն թողարկման մեջ էական կշիռ չունի, տնտեսության մյուս ճյուղերի


կողմից պահանջարկի աճի շնորհիվ ետճգնաժամային ժամանակահատվածում էներգետիկ ոլորտը ցուցաբերել է աճման միտում: Այսպիսով, դիտարկվող ժամանակաշրջանում մեծամասամբ այս երկու ճյուղերի փաստացի ցուցանիշների շեղումները միջինից տարբեր ուղղությամբ են եղել, ինչը և արտացոլված է կոռելյացիոն մատրիցում:

Ընդհանուր առմամբ, սերտ է նաև կապը էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի միջև, որոնք խմբավորել ենք ‘ճառայությունների’ ներքո:

Չեղիսակը ամփոփել է ոլորտների միջև կոռելյացիոն կապը՝ հաշվի առնելով նաև լագային կապերը:

Գծապատկեր 1. Էներգետիկայի և մյուս ճյուղերի միջև լագային կոռելյացիան

Քանի որ, տվյալները եռամսյակային են, ընտրվել է +/- 4 լագային միջակայքը: Շինարարության ոլորտի հետ կապը բոլոր լագերում բացասական է, սակայն այդ բացասական կապը էլ ավելի է ամրանում, երբ շարժվում ենք մեկ տարի առաջ: Այսինքն, տվյալ ժամանակային շարքի օգտագործմամբ ստացվում է, որ, եթե այժմ շինարարությունում գրանցվի ժամանակային շարքի միջինից բարձր ցուցանիշ, ապա դա բացասականորեն պետք է ազդի էներգետիկայի ցուցանիշի վրա առաջիկա մի քանի ժամանակահատվածներում և առավելագույնը՝ 4 եռամսյակ հետո (չորրորդ եռամսյակից հետո կոռելյացիոն կապը ուսումնասիրված չէ): Սակայն, ինչպես արդեն նշել ենք, սա կապված է շինարարության ոլորտում վերջին տարիների կայուն անկման հետ, և ավելի երկար թվային շարք օգտագործելու դեպքում (օրինակ սկսած 2000-ականների



սկզբից), ըստ մեզ, կստացվի ամբողջովին հակառակ պատկեր: Սակայն,

ինչպես արդեն նշվել է, վերոնշյալ ժամանակաշրջանի թվային շարքերը հնարավոր չէ համադրել ներկայիս հետ, ինչը թույլ չի տալիս ավելի երկար շարքեր օգտագործել:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի կոռելյացիոն կապը Էներգետիկայի և արդյունաբերության, ինչպես նաև առևտրի միջև: առևտրի և Էներգետիկայի միջև կոռելյացիոն կապը գնալով բարձրանում է, երբ տեղափոխվում ենք ժամանակային լագերով դեպի առաջ: Այսինքն, ամենաբարձր գործակիցը ստացվում է T+4 ժամանակահատվածում (մեկ տարի անց), ինչը նշանակում է, որ ներկայիս բարձր շրջանառությունը առևտրում հաջորդ չորս եռամսյակներում դեռևս դրականորեն է ազդում Էներգետիկայի բնագավառում համախառն արտադրանքի աճի վրա, ընդ որում ամեն հաջորդ եռամսյակում ավելի զգալի, իսկ 4 եռամսյակ հետո կոռելյացիոն կապը շատ բարձր է՝ մոտ 0,85: Յեղիևկար սաբացատրում է նրանով, որ առևտուրը արտահայտում է զարգացումները ընդհանուր տնտեսության նում, շատ սերտ կապված է բոլոր ճյուղերի հետևառևտրի ոլորտում բարձր շրջանառությունը դրական ազդեցություն է ունենում բոլոր ճյուղերի վրա հաջորդ ժամանակաշրջաններում, որոնք ևս դրական ազդեցություն են ունենում Էներգետիկ ոլորտի վրա: Այսպիսով, աճը առևտրում Էներգետիկայի ոլորտի վրա ունենում է ուղղակի և անուղղակի ազդեցություն, ընդ որում անուղղակի ազդեցությունը միգուցե առավել զգալի է:

Փոքր ինչ տարբեր է կապը արդյունաբերության հետ: Այստեղ կապը ավելի ուժեղանում է, երբ տեղաշարժվում ենք դեպի հաջորդ եռամսյակներ, բայց կտրուկ թուլանում է երրորդ լագից հետո, սակայն դեռևս մնում է բարձր մակարդակի վրա: Նման պատկեր է նաև ծառայությունների դեպքում, սակայն այստեղ կոռելյացիան խորանում է մինչև երկրորդ լագը, այնուհետև փոքր ինչ թուլանում է, իսկ հետընթաց լագերում կապը գրեթե նույնն է: Էլեկտրաէներգիայի առաջարկի աճը հիմնականում կախված է տնտեսական աճից, ուստի հեղինակն անդրադարձել է վերոնշյալ ճյուղի համախառն առաջարկին, գնահատելով Էլեկտրաէներգիայի արտադրության \$ուկցիոնալ կապը ՅՆԱ-ի աճից: Գնահատվել է ռեգրեսիոն հավասարում փոքրագույն քառակուսիների եղանակով՝ ցուցանիշների միջև քանակական կապը, ինչպես նաև դրանց նշանակալիությունը բացատրելու նպատակով: Արդյունքները ներկայացված են ստորև.

Աղյուսակ 2. Էլեկտրաէներգիայի առաջարկի կապը համախառն էներջին արդյունքի և նախորդ տարվանուն ընդամենակախատվածի Էլեկտրաէներգիայի արտադրության հետ (սեզոնային որոշումներ հարթված և լոգարիթմված)¹

Dependent Variable(կախյալ փոփոխական): LOG_ELECTRICITY_SA				
Method(մեթոդ): Least Squares (փոքրագույն քառակուսիներ)				
Sample(adjusted) (ընտրված (ճշգրտված)): 2006Q1 2017Q2				
Included observations: 46 after adjustments (ներառված դիտարկումներ՝ 46 ճշգրտումից հետո)				
Variable (փոփոխական)	Coefficient գործակից	Std. Error (ստ. շեղում)	t-Statistic (վիճակ.)	Prob. (հավան.)
LOG_GDP_SA	0.246852	0.082293	2.999651	0.0044
LOG_ELECTRICITY_SA(-4)	0.679339	0.109211	6.220431	0.0000
R-squared (քառակուսի)	0.778018	S.D. dependent var		10.453
Adjusted R-squared (ճշգրտված R քառակուսի)	0.772973			

Ստացվել է հետևյալ ռեգրեսիոն հավասարումը.


$$\text{LOG_ELECTRICITY_SA} = 0.2468 \cdot \text{LOG_GDP_SA} + 0.679 \cdot \text{LOG_ELECTRICITY_SA}(-4)$$

Գործակիցները բարձր նշանակալի են (սույնիսկ ավելի քան 99 տոկոս վստահելիության միջակայքում): Էլեկտրաէներգիայի արտադրության Էլաստիկությունը ՅՆԱ-ից կազմում է 0.25, այսինքն ՅՆԱ-ի 1 տոկոս աճի դեպքում Էլեկտրաէներգիայի արտադրությունն այս դեպքում պետք է աճի միջինում 0.25 տոկոսով:

Յեղիևակը ուսումնասիրել է նաև ՅՆԱ-ի ճեղքի և Էլեկտրաէներգիայի գերարտադրության կամ թերարտադրության (ճեղք) միջև կապը: ՅՆԱ-ի ճեղքի գնահատման բազմաթիվ եղանակներից նպատակահարմար է համարվել Յոդրիկ-Պրեսկոտի՝ սահող միջինների հիման վրա հաշվարկվող ֆիլտրը: Էլեկտրաէներգիայի արտադրության ճեղքի հաշվարկման դեպքում ևս օգտագործվել են վիճակագրական մեթոդներ:

Վերոնշյալ երկու փոփոխականների գծով ճեղքերը՝ արտահայտելով տոկոսային արտահայտության արտենցյալ մեծությունների նկատմամբ: Ստացվել է հետևյալ պատկերը.

¹ Ռեգրեսիոն հավասարումը գնահատված է "Eviews 9" ծրագրային փաթեթով



Գծապատկեր 2. ՀԱԱ-ի և ԷԼ Եկտրաէներգիայի արտադրության ճեղքերը

Վերոնշյալ փոփոխականների ճեղքերի միջև կապը շատ ամուր ք է, քանի որ իրականում կապը հնարավոր է լինի ավելի ամուր տարբեր լագերում: Բացի այդ ցուցանիշների տատանողականությունն է շատ տարբեր, ինչպես որ կարելի էր ենթադրել, ՀԱԱ-ի ճեղքի միջակայքը շատ ավելի նեղ է: Սակայն, այս երկու ցուցանիշների ճեղքերի միջև կապը դրական է, իսկ կոռելյացիայի ցուցանիշը կազմում է մոտ 0,3: Հեղինակը բացահայտել է, որ ՀԱԱ-ի փաստացի ցուցանիշի՝ պրոտեկցիայի գերազանցման դեպքում ԷԼ Եկտրաէներգիան գերարտադրվում է:

Ատենախոսության երրորդ՝ «**ԷԼ Եկտրաէներգետիկական համակարգի զարգացման միտումները**» գլխում հեղինակը բացահայտել է ԷԼ Եկտրաէներգետիկական համակարգի պետական կարգավորման կատարելագործման ուղիները և մրցակցային հարաբերությունների բարելավման ուղիները ՀՀ Էներգետիկ ոլորտում:

Հեղինակը բացահայտել է, որ ԷԼ Եկտրաէներգետիկական համակարգի օրենսդրական առանցքային խնդրն դոտեր են՝ անկատար մեթոդաբանությունը, գործող մեթոդաբանության մեջ ԷԼ Եկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների պատասխանատվության սահմանների հստակ տարբերակման բացակայությունը, դրան զուգահեռ, չեն գործում պատասխանատվության բաշխման կարգավորումներ, որի հետևանքով պատասխանատվությունն ամբողջությամբ փոխանցվում վերջնական սպառողին:

Հեղինակը բացահայտել է, որ ԷԼ Եկտրաէներգետիկական համակարգում ֆինանսական հոսքերը տեղի են ունենում բաշխման գործառնայ թիրականացնող ընկերության միջոցով: Այս հանգամանքն իր

մեջ պարունակում է եական նշանակություն ունեցող ռիսկեր շուկայի մասնակիցների և սպառողների համար, օրինակ՝ երբ էլեկտրաէներգիայի պլանավորված արտադրության ծավալները չապահովվեն ինչ-որ պատճառներով: Եթե բաշխման գործառույթ իրականացնող ընկերությունը ֆինանսապես կայուն չլինի ապա, դակարող համակարգի փլուզման պատճառով կարող է դառնալ: Այդպիսի դեպքի վառ օրինակ է «ՅԷՑ» ՓԲԸ ֆինանսական ճգնաժամի ժամանակաշրջանը: Յետևաբար, համակարգի տարեկան հաշվեկշիռը ուղղակիորեն ռիսկեր կարող է առաջացնել բաշխման գործառույթ իրականացնող ընկերության համար, բայց ոչ առանձին էլեկտրաէներգիա արտադրող կայանի կամ առանձին սպառողի համար: Այդ ռիսկերը ծածկվում են վերջնական սպառողների սակագների միջոցով:

Յեղիևակը հիմնավորել է, որ անհրաժեշտություն կա մշակել առանձին ճյուղի օրենսդրության հիմքեր: Օրինակ՝ ստեղծել համակարգի օրենսգիրք, որի շնորհիվ հստակորեն կսահմանվեն էներգետիկայի բնագավառում էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի գործունեությունն իրականացնող մարմնի և մյուս մասնակիցների գործառույթները և պատասխանատվության սահմանները, ինչը կհանգեցնի էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման:

ՅՅ Էներգետիկ ոլորտում մրցակցային հարաբերությունների բարելավման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ստորև նշված գործողությունները՝

- Իրականացնել բաշխման և մատակարարման համակարգերի տարանջատում և այդ ընկերությունների նկատմամբ սահմանել տարբերակված կարգավորում
- Պարզեցնել արտահանման և ներկրման կանոնակարգումը,

Յեղիևակը հիմնավորել է, որ էլեկտրաէներգետիկական համակարգի ազատականացման շրջանակներում բաշխման տարանջատումը մատակարարման համակարգից մրցակցության մեծ շարժառիթներ կստեղծի, երբ համապատասխան լիցենզիա ունեցող էլեկտրաէներգետիկական համակարգի տարբեր մասնակիցներ հնարավորություն կունենան մատակարարել ավելի ցածր գնով էլեկտրաէներգիա, ինչը կբերի էլեկտրաէներգիայի սակագնի իջեցմանը: Արդեն սահմանված բաշխման սակագները թույլ կտան

Էլեկտրական Էներգիա ձեռք բերել նախընտրած մատակարարներից և նույնիսկ ներկրողից ու լիցենզավորված արտադրողներից:

Եզրակացումը Բաժնում հակիրճ ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, արվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ տնտեսագետների կարծիքները Էլեկտրաէներգետիկական համակարգի Էության բացահայտման և բովանդակության մեկնաբանման հարցում ոչ միայն չեն հակասում միմյանց, այլ լրացնում ու ավելի ամբողջական են դարձնում հիմնախնդրի դիտարկումը: Էլեկտրաէներգետիկական համակարգի դերի նորովի մեկնաբանման հարցում կարևորվում է դրա՝ երկու տեսանկյունով ուսումնասիրությունը. դա դիտարկել որպես արտադրական ենթակառուցվածքի կարևոր տարր, որով Էլ հիմնավորվում է Էներգետիկ բնագավառի դերը տնտեսական զարգացման գործում և երկրորդ՝ դա դիտարկել որպես Էներգետիկ անվտանգությունն ապահովող կարևոր բաղկացուցիչ:
2. Չնայած Էլեկտրաէներգիայի ստացման Էկոլոգիապես մաքուր եղանակին, ցածր ինքնարժեքին և տեղակայման ու օգտագործման դյուրինությանը՝ արևային Էլեկտրակայանների արտադրած Էլեկտրաէներգիայի ծավալի զգալի ավելացումը ՀՀ Էներգետիկ հաշվեկշռում կարող է պարունակել ռիսկեր Էներգետիկ անվտանգության համատեքստում: Դա պայմանավորված է նրանով, որ այս կերպ արտադրված Էլեկտրաէներգիան ունի մեծ կախվածություն եղանակային պայմաններից ինչպես նաև առկա է այն փաստը, որ այս կայանները գիշերային ժամերին Էլեկտրաէներգիա չեն արտադրում, ուստի այս եղանակը չի կարող համարվել երկրում Էլեկտրաէներգիայի ստացման հիմնական աղբյուր, այլ կարող է հանդես գալ որպես համակարգին առաջնային օժանդակող միջոց Էլեկտրաէներգիայի արտադրության համար:
3. Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները, աճման կամ նվազման հստակ միտումներ չեն դրսևորել: Տարիների ընթացքում Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների ցուցանիշի անկանոն փոփոխությունը մի շարք պատճառներ ունի, օրինակ՝ երկրում տնտեսական ակտիվությունը, ՀՀ-ից Էլեկտրաէներգիա գնող երկրների պահանջարկը և այլն: 2005-2016թթ. Էլեկտրաէներգիա արտադրող

կազմակերպությունների արտադրած էլեկտրաէներգիայի ծավալների էական կառուցվածքային տեղաշարժեր են արձանագրվել: 2005-2016թթ. Ատոմակայանի միջին տեսակարար կշիռը 37.6% է, ՋԷԿ-երինը 38.2%, ՅԷԿ-երինը 24.2%: Էլեկտրաէներգետիկական շուկան դիվերսիֆիկացված է, չնայած, որ 2011-2014թթ Յերֆինդալ Յիրշմանի գործակիցը գտնվել է 2000-2500 միջակայքում, փաստելով շուկայի միջին կենտրոնացվածությունը, այնուամենայնիվ ցուցանիշը ավելի մոտ է բարձր համակենտրոնացման շեմին: Այս դիտարկման լույսով հիմք ունենք եզրակացնելու, որ կենտրոնացվածության բարձր աստիճանը կարևոր հիմնախնդիր է, հատկապես, էներգետիկ անվտանգության տեսանկյունից:

4. Էներգետիկայի բնագավառն ու էլեկտրաէներգետիկական համակարգն իրենց ուրույն դերն ունեն ՅՅ տնտեսության զարգացման, էներգետիկ և տնտեսական անվտանգության ապահովման գործընթացում: Չնայած այն փաստին, որ էներգետիկական համարվում է տնտեսության մյուս ճյուղերի գործունեությունը սնուցող օղակներից մեկը, այնուամենայնիվ դրա հետ ուժեղ կամ թույլ փոխկապակցվածություն ունեցող այլ ճյուղերն ունեն տարատեսակ ազդեցություն ուսումնասիրվող բնագավառի վրա:

5. ՅՆԱ-ի աճից էլեկտրաէներգիայի արտադրության ֆունկցիոնալ կապի գնահատման արդյունքները փաստում են, որ ՅՆԱ-ի 1 տոկոս աճի դեպքում էլեկտրաէներգիայի արտադրությունը պետք է աճի միջինում 0.25 տոկոսով: ՅՆԱ-ի և էլեկտրաէներգիայի արտադրության ճեղքերի միջև առկա կապի, գնահատումները հիմք են պնդելու, որ վերոնշյալ փոփոխականների ճեղքերի միջև առկա կապը ամուրի է: ճեղքերի միջև գնահատվել է դրական կապ, որը հիմք է եզրակացնելու, որ ՅՆԱ-ի փաստացի ցուցանիշի՝ արտենցյալի գերազանցման դեպքում էլեկտրաէներգիան գերարտադրվում է:

6. Յայ-վրացական էլեկտրաէներգետիկ ոլորտի փոխարաբերությունների առավել բարձր արդյունավետության ապահովման նպատակով առաջարկվում է ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝ բաղկացած երկու երկրների կողմից լիազորված ոլորտի մասնագետներից, որը կապահովի համագործակցության տեխնիկական, նորմատիվային ինչպես նաև

իրավական հիմքերի նախագծեր, վերը նշված ծրագրերի իրականացմանն օժանդակելու նպատակով:

7. Արտադրական հզորությունների կառավարման իրավունքը վերապահել էլեկտրաէներգիա արտադրող ընկերություններին, օպերատորի կողմից կառավարվելու փոխարեն: Էլեկտրաէներգիայի պահանջարկը կանխատեսելու համար կիրառել նաև մեր կողմից բացահայտված ՀՀ էներգետիկայի և տնտեսության մյուս ճյուղերի փոխադարձ կապերը և դրանց ամրությունն աստիճանը, որը հնարավորություն է ընձեռում կանխատեսել էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը՝ կախված տնտեսության առանձին ճյուղերի սցենարային զարգացումներից: Ինչպես նաև կիրառել մեր կողմից գնահատված՝ էլեկտրաէներգիայի արտադրության ֆունկցիոնալ կապը ՀՆԱ աճից, ՀՆԱ-ի ճեղքի և էլեկտրաէներգիայի գերարտադրության կամ թերարտադրության (ճեղք) միջև կապը: Քանի որ կանխատեսման՝ ապագային միտված և իներցիոն մոտեցումներով, ՀՆԱ-ի աճի և էլեկտրաէներգետիկայի ոլորտի միջև կապերի գնահատումը հնարավոր է դարձնում կանխատեսել անհրաժեշտ ժամանակաշրջանի էլեկտրաէներգիայի արտադրությունը:
8. Բաշխման լիցենզավորված գործունեությունն իրականացնող կազմակերպության համար առաջարկվում է հաշվարկված անհրաժեշտ հասուն թի նկատմամբ կիրառել սեզոնային ճշգրտող գործակից, որը կորոշի սակագնի մարժան սպառողական յուրաքանչյուր խմբի համար:
9. Առաջարկվում է կատարել փոփոխությունն Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի որոշմամբ հաստատված սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայի շահույթաբերության նորմայի նվազագույն սահմանաչափում: Սահմանաչափին ավելացնել նաև ՀՀ պետական երկարաժամկետ պարտատման միջին տոկոսադրույթի մեծության սահմանը՝ 12%-ը գերազանցելու դեպքում:
10. Առաջարկվում է տարանջատել բաշխման համակարգը մատակարարման համակարգից և այդ ընկերությունների համար սահմանել տարբերակված կարգավորում, համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:
Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հ.Ս. Մարգարյան, «ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացման ուղիները» «Հանրային կառավարում» գիտական հանդես թիվ 3, Երևան, 2016, էջ 98-105
2. Հ.Ս. Մարգարյան, «ՀՀ ջերմաէլեկտրակայանների գործունեության արդյունավետության բարձրացման ուղիները» «Ֆինանսներ և Էկոնոմիկա» գիտական հանդես թիվ 1-2(197-198) 2017, Երևան, էջ 24-26.
3. Հ.Ս Մարգարյան, «Էներգետիկայի և տնտեսության մյուս ոլորտների միջև փոխկապակցվածությունները ՀՀ-ում» «Ֆինանսներ և Էկոնոմիկա» գիտական հանդես թիվ 7-8(203-204) 2017, Երևան, էջ 64-71
4. Հ.Ս. Մարգարյան, Մ.Ս. Մելքումյան, Վ.Ավետիսյան, Ռ.Հակոբյան, «ՀՀ ներդրումային քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները արդյունաբերության, էներգետիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում» «Ֆինանսներ և Էկոնոմիկա» գիտական հանդես թիվ 7-8(203-204) 2017, Երևան, էջ 57-64
5. Հ.Ս. Մարգարյան «ՀՀ և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի փոխհարաբերությունների զարգացման ուղիները» «Այլընտրանք» գիտական հանդես թիվ 4, Երևան, 2017, էջ 270-275
6. Мелкумян М.С., Маргарян Г.С. «Функциональная связь производства электроэнергии от роста ВВП» «Содружество» российско-китайский научный журнал научно-практической конференции №21, Новосибирск, 2017, ст. 76-80

МАРГАРЯН ГРАНТ СТЕПАНОВИЧ
УПРАВЛЕНЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЭЛЕКТРОЭНЕРГЕТИЧЕСКОЙ СИСТЕМЫ
(ПО МАТЕРИАЛАМ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02- “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита состоится 28-го июня, в 2018г. в 14⁰⁰ на заседании специализированного совета 014 ВАК Республики Армения по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна, 128.

РЕЗЮМЕ

Целью социально-экономического развития страны является улучшение благосостояния населения и создание благоприятных условий для постоянного роста уровня жизни. Система энергоснабжения имеет важное значение для достижения цели, направленной на удовлетворение потребностей населения в первую очередь электроэнергией и содействии расширению воспроизводства производственных мощностей.

В современной рыночной среде в рамках энергосистемы решаются актуальные проблемы структурной реформы материальной базы страны и развития социальной сферы. Развитие национальной экономики и ее конкурентоспособность в мировой экономике зависят от эффективности деятельности сектора. С этой точки зрения необходимо сформулировать и модернизировать систему менеджмента организаций сектора одновременно с существенными реформами в энергетическом секторе, повысить эффективность ее функционирования.

Проблема особенно актуальна для экономики Армении, поскольку более 190 энергетических компаний в стране еще не адаптированы к рыночным требованиям, находятся в плохих финансово-экономических условиях и не конкурентоспособны в иностранных энергетических компаниях. Это объясняется непрерывным усугублением экономических и социальных отношений, изменчивостью внешней и внутренней среды, увеличением материальной базы технологического уровня, конкуренцией на рынке электроэнергии и рынком услуг. Самые жесткие требования рынка расширяются по требованиям потребителей, тем более актуальной является необходимость совершенствования системы управления организацией и выбор наиболее эффективной системы управления, которая может принимать решения, которые обеспечат высокую эффективность действия организаций энергосистемы.

Научная новизна диссертации определяется целым рядом теоретических, методологических и практических результатов, полученных в исследовании, которые не повторяют результаты исследований, проведенных исследователями вокруг конкретных вопросов. Результаты анализа и исследований следующие:

Были предложены новые подходы к повышению эффективности функционирования энергосистемы Армении в связи с расчетом тарифной маржи.

Изучение корреляций между энергетикой и другими секторами экономики в Армении выявило взаимосвязь между энергетикой и другими секторами экономики и их степенью прочности, что дает возможность прогнозировать спрос на электроэнергию в зависимости от сценария развития отдельных отраслей экономики.

В качестве самой переменной процесса, отделяющей выработку электроэнергии от энергетического сектора, функциональная связь между разрывом ВВП и разрывом производства электроэнергии с использованием фильтра Ходрика-Прескотта

вычисляемый на основе скользящих средних показал, что при превышении фактического показателя ВВП электроэнергия перепроизводится. Прогнозирование, ориентированные на будущее и инерционные подходы, оценка взаимосвязи между ростом ВВП и энергетическим сектором позволяют прогнозировать производство электроэнергии на требуемый период.

Основной целью исследования было выявление актуальных проблем развития электроэнергетической системы Армении на основе методологического и факторного анализа энергосистемы и путей решения существующих проблем. Разработка методологических и практических рекомендаций по созданию и совершенствованию соответствующих структур организаций.

Для достижения цели были поставлены следующие цели:

- Определение сути энергосистемы, раскрыв спецификации системы
- Определение макроэкономических факторов, влияющих на эффективность управления организациями энергосистем;
- Проанализировать текущее состояние системы электроснабжения в Армении
- Анализ энергетики и других секторов экономики
- Определение проблем в электроэнергетической системе;

Выводы, полученные в ходе опроса, могут быть применены государственными органами, занимающимися функциями управления и регулирования энергетического сектора, а также организациями энергосистемы Республики Армения. Основные результаты исследования могут быть полезны для специалистов в области энергетики и управления, а основные положения, обсуждаемые в работе, можно найти в исследовании теории экономики, а также в специальных дисциплинах, связанных с проблемой.

MARGARYAN HRANT
MAJOR MANAGEMENT PROBLEMS OF ELECTRIC POWER SYSTEM DEVELOPMENT
(ON MATERIALS OF RA)

The abstract of the thesis for receiving the degree of PhD of economic sciences in the field 08.00.02- "Economics, Management of Economy and its Branches".

The defense of the thesis will be held on 28th June, 2018, at 14⁰⁰ at Specialized Council 014 in Economics of SCC of RA at Armenian State University of Economics, at the following address: 0025, Yerevan, M. Nalbandyan, 128.

ABSTRACT

The goal of the country's social and economic development is to improve the well-being of the population and create favorable conditions for the constant growth of the standard of living. The energy supply system is important for achieving the goal aimed at satisfying the population's needs primarily with electricity and facilitating the expansion of the reproduction of production capacities.

In the modern market environment, within the energy system, topical problems of structural reform of the country's material base and development of the social sphere are being solved. The development of the national economy and its competitiveness in the world economy depend on the energy efficiency of the sector. From this point of view, it is necessary to formulate and modernize the energy management system of the organization at the same time as significant reforms in the energy sector, and improve the efficiency of its functioning.

The problem is especially important for the Armenian economy, since more than 190 energy companies in the country are not yet adapted to market requirements, are in poor financial and economic conditions and are not competitive in foreign energy companies. This is explained by the continuous strengthening of economic and social relations, the volatility of the external and internal environment, the increase in the technological base of the material base, competition in the electricity market and the services market. The most stringent market requirements are expanding according to the requirements of consumers, the more urgent is the need to improve the organization's management system and choose the most effective management system that can make decisions that will ensure high efficiency of the company's energy system.

The scientific novelty of the thesis is determined by a number of theoretical, methodological and practical results obtained in the study, which do not repeat the results of research conducted by researchers around specific issues. The results of the analysis and research are as follows:

Having studied the methodology for assessing the economic efficiency of the energy system, we proposed new methodological approaches to assessing the economic efficiency of the RA energy system

The study of the correlations between energy and other sectors of the economy in Armenia revealed the relationship between energy and other sectors of the economy and their degree of durability.

As the most variable process separating the generation of electricity from the energy sector, the functional relationship between the GDP gap and the power generation gap using the Hodrick-Prescott filter calculated on the basis of moving averages showed that if the actual GDP is exceeded, electricity is overproduced.

The main goal of the research was to identify the actual problems of the development of the electric power system of Armenia based on methodological and factor analysis of the energy system and ways of solving existing problems. Development of methodological and

practical recommendations for the creation and improvement of relevant structures of organizations.

To achieve the goal, the following goals were set:

- Definition of the essence of the power system, by opening the system specifications
- Definition of macroeconomic factors affecting the efficiency of management of energy system organizations;
- Analyze the current state of the electricity supply system in Armenia
- Analysis of energy and other sectors of the economy
- Identification of problems in the system;

The findings of the survey can be applied by government authorities involved in the management and regulation of the energy sector, as well as by organizations of the energy system of the Republic of Armenia. The main results of the research can be useful for specialists in the field of energy and management, and the main points discussed in the work can be found in the study of the theory of economics, as well as in special disciplines related to the problem.

